ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 օգոստոսի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

112
(2592)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 59



Կորոնավիրուսի համաճարակի ողջ ընթացքում իշխանությունների կողմից եղել են հակասական հայտարարություններ: Խոսքը նաեւ դիմակը կրելու մասին է: «Ես մասնագետների հետ քննարկման արդյունքում կարող եմ ասել հետեւյալը, որ նաեւ առողջապահության նախարարն ասաց, որ մարդիկ ուղղակի դիմակ կրելու եւ քայլելու անհրաժեշտություն չունեն». սա վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերն են՝ ասված 2020 թվականի մարտի 13-ին: Օրեր անց՝ մարտի 19-ին, այն ժամանակ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը նշում էր. «Ձեր կրած սովորական դիմակները վիրուսից չեն պաշտպանում: Վիրուսն ավելի փոքր է, քան դիմակների մեջ եղած ծակերը»: Նույն Նիկոլ Փաշինյանն արդեն մայիսի 24-ին ասում էր. «Դիմակի կրման կարգապահությունը, դիմակի կրման կուլտուրան մեզ հնարավորություն կտա զրոյացնել դեպքերը: Նաեւ համաճարակաբանների հետ քննարկելով՝ եկել ենք այն եզրակացության, որ տանը պատրաստված դիմակներն անգամ կարող են արդյունավետ լինել դրանց կրման որակի պայմաններում»: Դրանից երկու ամիս առաջ Արսեն Թորոսյանն ասում էր, թե դիմակը պետք է փոխել մի քանի ժամը մեկ, եւ շատ կարեւոր է դրանց պատրաստման որակը: Այսպիսով, ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ պաշտոնյաներն իրարից անկախ են հայտարարություններ արել, իսկ Փաշինյանի այն պնդումները, թե սովորական կամ ինքնաշեն դիմակները կարող են պաշտպանել վիրուսից, սուտ են եղել: Նա խաբել է քաղաքացիներին՝ վտանգելով մարդկանց առողջությունը:

«Հայաստան» խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունը ստորագրահավաք է սկսել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խմբակցության անդամները որոշել են ոչ միայն իրենք իրենց, այլ նաեւ «Հայաստան» դաշինքի բոլոր 153 անդամների ստորագրությունները ստանալ առ այն, որ եթե որոշեն հրաժարվել պատգամավորական մանդատներից, ապա այն բոլորի վրա է տարածվելու: «Այսինքն՝ մարդիկ չլինեն, որ եթե մանդատ ստանալու հերթն իրենց հասնի, ինչ-որ խաղերի մեջ մտնեն իշխանության հետ ու համաձայնեն «Հայաստան» խմբակցության մանդատով խորհրդարան գնալ»,- նշեց մեր զրուցակիցը: Տեղեկությունը մեկնաբանելու համար «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅԴ-ական Գեղամ Մանուկյանին դիմեցինք, նա, սակայն, հրաժարվեց որեւէ մեկնաբանություն տալ: «Առանց մեկնաբանության»,- ասաց նա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պահին «Հայաստան» դաշինքի դաշնակցական թեւն է միայն, որ միասնաբար ու միանգամից ներկայացրել է դաշինքում ընդգրկված բոլոր դաշնակցականների դիմումները: Մեր դիտարկմանը Մանուկյանն այսկերպ արձագանքեց. «Շնորհակալություն գնահատականի համար»:

Վիտալի Բալասանյանին ադրբեջանցի գեներալներից մեկի հետ տեսել են Ասկերան քաղաքում: «Մի քանի օր անց զանգեցին ու ասացին, որ Վիտոն թուրքի հետ Ասկերանով, Ստեփանակերտով եկել անցել է դեպի Կարմիր շուկա: Ճիշտն ասած՝ աչքովս չեմ տեսել, բայց Վիտոյից էդքանը հաստատ սպասելի է»,- տեղեկացրել է կուսակցության ղեկավարը: Տեղեկությունը փորձեցինք Բալասանյանի կուսակցությունից ճշտել, ինչը մեզ այդպես էլ չհաջողվեց: Նրա գլխավորած «Արդարություն» կուսակցությանը մոտ կանգնած աղբյուրը, սակայն, վստահեցրեց, որ շրջանառվող տեղեկությունը սուտ է: «Միանշանակ այն ենթատեքստը, որն առկա է, իրականություն չէ: Այդ տղան Նիկոլ Փաշինյանի հետ մի շատ կարեւոր ընդհանրություն ունի. ատում է հաղթանակ տարած բոլոր գեներալներին, Բալասանյանի նկատմամբ անձնական ատելություն ունի: Ընտրությունների ժամանակ էլ միացել է Մասիս Մայիլյանին ու Սամվել Բաբայանին»,- ասաց մեր զրուցակիցը՝ այդպես հերքելով տեղեկությունը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն այս օրերին քննարկում է 2008թ. «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի հարցը: Տեղեկացանք, որ Գեղամ Պետրոսյանի պաշտպան Վաղարշակ Գեւորգյանը դիմում է ներկայացրել նախաքննական մարմին, որպեսզի Գեղամ Պետրոսյանի դեմ հարուցված քրեական գործը կարճվի, եւ նա արդարացվի: Ինչպես հայտնի է, 2019 թվականի օգոստոսի 4-ին «Երեւան Կենտրոն» ՔԿՀ-ից կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալից» ազատ արձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանը: Անցել է շուրջ 3 տարի, սակայն Գեղամ Պետրոսյանի ազատ արձակվելուց հետո որեւէ քննչական գործողություն չի արվել, եւ քրեական գործը մնացել է Հակակոռուպցիոն կոմիտեի դարակներից մեկում: Հիշեցնենք, որ Գեղամ Պետրոսյանը մեղադրվում է 2008 թվականի մարտի 1-ին հրազենի գործադրմամբ Զաքար Հովհաննիսյանին սպանելու համար: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ սպանություն: Վերջինիս նախաքննական մարմինը կալանավորել էր, քանի որ քրեական գործով Գեղամ Պետրոսյանի դեմ ցուցմունք էր տվել ոստիկանության զորքերի ենթասպա Ալեքսանդր Ազարյանը, թե տեսել է՝ ինչպես է Գեղամ Պետրոսյանը կրակել Զաքար Հովհաննիսյանի վրա: Ավելի ուշ փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ իրականում Պետրոսյանի զենքի եւ դիակում եղած պարկուճի տեսակները չեն համընկնում, եւ այդ հիմքով Պետրոսյանն ազատ արձակվեց:

ՉԵՆ ԹՈՂԵԼ ԱՐՑԱԽ

ԱՐԳԵԼԱՆՔ՝ ՎԵՐԵՎՆԵՐԻՑ

Արցախում խաղարար առաքելություն իրականացնող ռուսական խաղաղապահ զորախմբի զինծառայողների կողմից պաշտոնապես խոչընդոտվել է Հայաստանի առաջին արտգործնախարար եւ «Ժառանգություն» կուսակցության հիմնադիր Բաֆֆի Հովհաննիսյանի մուտքն Արցախի Հանրապետության տարածք: Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ նա Արցախ էր մեկնում՝ մասնակցելու թոռնիկի մկրտության արարողությանը:

«Ցույց տալով նրան իրենց հրամանատարի հրամանը ուղեկցող լուսանկարի հետ միասին՝ անցակետում գտնվող զինվորները մերժման որեւէ հոդաբաշխ պատճառ կամ հիմնավորում չբերեցին, բայց հաստատեցին, որ արգելանքը կարող է լինել պաշտոնական Երեւանի «ամենավերեւից»»,- իր տարածած հաղորդագրության մեջ ասել է Հովհաննիսյանը:

«Հարցը ռուսական զորքերի տիրույթում է, նրանցից ճշտե՛ք»,- լրատվամիջոցների հարցումներին ի պատասխան՝ ասել են Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունից:

«Ժառանգություն» կուսակցության նախագահի պաշտոնակատար Անդրանիկ Գրիգորյանի համոզմամբ՝ Հովհաննսիյանի մուտքն Արցախ անձամբ Նիկոլ Փաշինյանի հրամանով է արգելվել:

-Ի՞նչ է հայտնի Ձեզ այս մասին:

-Տեղեկատվական առումով ինձ այդքան էլ շատ բան հայտնի չէ, բավարարվել եւ սահմանափակվել եմ Ռաֆֆի Հովհաննիսյանի տարածած հաղորդագրությամբ, իր հետ դեռեւս չեմ խոսել եւ, կարծում եմ, դեռ ճանապարհին է: Ուղղակի տեղի ունեցածը մերօրյա իրողությունների ողբերգական առաջնապատկերին խտացված գունապատկերն է պարունակում:

-Ի՞նչ եք ցանկանում դրանով ասել:

-Երբ որ հայը իր երկրում տեղաշարժվելու սահմանափակում ունի, սա ողբերգական է:

-Ի՞նչ գնահատական կտաք քաղաքական առումով, մարդկային առումով, քանի որ Ռաֆֆի Հովհաննիսյանը գնում էր թոռնիկի մկրտությանը:

-Այո, երեխայի մկրտությունն էր տեղի ունենալու Արցախում:

-Սա ո՞ր կողմի թերացումն է:

-Ես կարծում եմ, որ Ռաֆֆին իր հաղորդագրության մեջ մի կարեւոր բառ էր չակերտավորել, որը մասնագիտական հանրույթի ուշադրությունից կարծես թե դուրս է մնում՝ «ամենավերեւի»: Դա, կարծում եմ, Նիկոլ փաշինյանի անձնական վրեժն է վերջին շրջանում Ռաֆֆիի ակտիվությանը քաղաքական:

-Այսինքն՝ չի՞ հանդուրժում, որ պահանջում է հրաժարականը, փողոց է դուրս գալիս:

-Իհարկե: Ես կարծում եմ՝ հենց այդտեղից է ծնված բանալի բառը:

-Ցանկանում եք ասել «մեսի՞ջ» է հղում, որ եթե այդպես շարունակվի, ավելին կլինի:

-Ես չեմ կարող ասել, բայց դա հեռու չէ Նիկոլ Փաշինյանից: Վերջին 2-3 տարիներին ինքը 0 հանդուրժողականություն է ցույց տվել քննադատության նկատմամբ:

-Այսօր Ռաֆֆի Հովհաննիսյանն է, վաղը չի բացառվում, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է նման իրավիճակում հայտվել:

-Երեկ դեռ «Դաշնակցականի» երիտասարդներն էին, այսինքն՝ մարդիկ, որոնք ողնաշար ունեն, մտածում են, անհանգստանում են, այլընտրանքի փնտրտուքների մեջ են, անցանկալի են Հայաստանի Հանրապետությունում:

-Ու՞ր կարող է տանել այս ամենը:

-Ընդամենը մտորումներ են առաջ բերում: Մենք մոտենում ենք պետականության անկմանը:

-Այդքա՞ն պեսիմիստական:

-Հավատացե՛ք, որ հիմք կա դրա համար, որովհետեւ վերջին տարիներին՝ 2020թ-ից հետո, Հայաստանում դրական արձանագրում անելու որեւէ հիմքեր չկան:

-Ինչու՞ եք մտածում, որ կորցնում ենք պետականությունը:

-Պետականությունը կորցնում ենք, որովհետեւ իշխանության վերին հատվածում անկարողունակների թիմ է հայտնվել, որոնք օրվա կուրսով փորձում են օր առաջ երկարաձգել իրենց իշխանությունը, այսինքն՝ իրենք դիմագրավում են օրվա մարտահրավերներին՝ առանցքային նպատակ ունենալով սեփական իշխանության երկարաձգումը: Մնացածը դիպվածներ են՝ գուցե ոչ կաչեւոր: Այսօր Ռաֆֆին է, երեկ այլ մարդիկ էին, վաղը կարող է լինել յուրաքանչյուրս: Չկան, ինստիտուտները չեն գործում, փոխլրացնող, փոխզսպող, հակակշռող ինստիտուտներ չկան Հայաստանում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԽՍՏԱՑՆՈՒՄ ԵՆ

ԿՀԱՄԱՐՎԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ

Ազգային անվտանգության ծառայությունն Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հուլիսի 13-ին հանրային քննարկման է ներկայացրել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի նախագծի վերամշակված տարբերակը, որով առաջարկում են արդիականացնել այն: Հանրային քննարկման ժամկետը ավարտվել է, եւ ստացվել են ընդամենը երկու կողմ եւ երկու դեմ ձայներ:

Հիմնավորման մեջ նշվում է, որ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը բովանդակային եւ օրենսդրական տեսանկյունից ամբողջական բարեփոխման եւ կատարելագործման կարիք ունի, այն ընդունվել է 1996 թվականին, եւ դրանում առկա մի շարք իրավակարգավորումներ չեն արտահայտում ներկա իրողությունները, ինչպես նաեւ արդի միջազգային փորձը:

Մասնավորապես, նախագծով առաջարկվում են պետական գաղտիքին առնչվող հասկացությունների հետեւյալ սահմանումները՝

1) պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ (գաղտնի տեղեկություններ)՝ ցանկացած տեղեկություն, արտադրանք կամ նյութ, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է համապատասխան դրոշմագիր (նշում), պաշտպանվում է պետության կողմից, եւ որի տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին,

2) պետական գաղտնիք՝ Հայաստանի Հանրապետության ռազմական կամ արտաքին հարաբերությունների կամ տնտեսության, գիտության եւ տեխնիկայի կամ հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկությունները, արտադրանքը կամ նյութերն են, որոնք սույն օրենքի համաձայն պահպանվում եւ պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին:

Առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ գաղտնիության աստիճաններին համապատասխան՝ պետական գաղտնիքի տեղեկակիրներին տրվում են «Հատուկ կարեւորության», «Հույժ գաղտնի» եւ «Գաղտնի» դրոշմագրեր: Առաջարկվող նոր կարգավորումների համաձայն՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի՝ պետական գաղտնիքին առնչվելու թույլտվությունը երաշխավորվում է համապատասխան պաշտոնում նրանց ընտրվելուց կամ նշանակվելուց անմիջապես հետո:

Ն.Հ.

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանում աշխատանքային հանդիպումներ ունենալու նպատակով հուլիսի 30-ից մինչեւ օգոստոսի 1-ը ներառյալ Վրաստան (Թբիլիսի) է գործուղվել պատվիրակություն ՀՀ-ից: Այցի ծախսերը կատարվել են 2022 թվականի պետական բյուջեի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերում արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում երեք հոգի են եղել՝ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, աշխատակազմի ղեկավարի օգնական Հ. Պողոսյանը, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Ն. Խաչատրյանը: Նկատենք, սակայն, որ մինչեւ այժմ այս գործուղման մասին որեւէ տեղեկություն առկա չէ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Պաշտոնապես Հայաստանում պղնձի եւ մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալները զգալի նվազել են: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ այս տարվա հունվար-մայիս ամիսներին, անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պղնձի խտանյութի ծավալները նվազել են 16.6, իսկ մոլիբդենինը՝ 5.3 տոկոսով: Բացի այս, այս տարվա առաջին հինգ ամիսների ցինկի խտանյութ եւս քիչ ենք արտադրել:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում անհագստացած են, քանի որ մնացել է մի քանի օր, բայց ոչ բոլոր կուսակցությունների ղեկավար անդամներն են հայտարարագրեր ներկայացրել: Հանձնաժողովը, մտահոգված իրավիճակով, որոշել է հրապարակային հիշեցնել, թե ժամկետին քիչ է մնացել: Մասնավորապես, երեկ հայտնել էին, որ, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի համաձայն, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմինների անդամները (այսուհետ՝ Կուսակցության ղեկավար մարմնի անդամներ) պետք է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնեն 2021 թվականի գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագիրը, ինչպես նաեւ 2022 թվականի հունվարի 1-ից հետո պաշտոն ստանձնելու կամ դադարեցնելու դեպքում՝ համապատասխան հայտարարագրերը:

Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 8-ին հրապարակում էր տարածել հայտարարագրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ՝ տրամադրելով օգտվողի անուն եւ գաղտնաբառ, եւ առաջարկել մեկամսյա ժամկետում՝ մինչեւ 2022 թվականի օգոստոսի 8-ը ներկայացնել համապատասխան հայտարարագրերը:

ՈՒՇԱԳՐԱՎ ԴԵՊՔ՝ ՍՊԻՏԱԿՈՒՄ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Սպիտակ քաղաքում: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ 36 տարեկան կնոջը շտապ տեղափոխել են Սպիտակի հիվանդանոց ժամվելի սպիրտի թունավորմամբ: Իրավապահներին կինը հայտնել է, որ սառը ջուր խմելու նպատակով սառնարանից շփոթմամբ ջրի փոխարեն հանել է ժավելի սպիրտ եւ խմել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ կնոջ կյանքին վտանգ չի սպառնում:

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուրիշի գույքը վնասելու եւ թմրամիջոցների՝ իրացնելու նպատակով ապօրինի շրջանառության դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում 2022թ. հուլիսի 29-ին ստացվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայողի զեկուցագիրը՝ Մեղրի քաղաքում մի խումբ անձանց կողմից իրացման նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայով Երեւան քաղաք շարժվելու վերաբերյալ:

Ստացված տեղեկությունը ստուգելու նպատակով 2022թ. հուլիսի 29-ին՝ ժամը 04:30-ին, Կապան քաղաքի գազալցակայանում ոստիկանության ծառայողները, օրենքով սահմանված կարգով, հիշյալ տրանսպորտային միջոցի վարորդից պահանջել են դադարեցնել ավտոմեքենայի ընթացքը: Վերջինս, չենթարկվելով իրավապահների կողմից ներկայացված պահանջին, փախուստի դիմելու նպատակով շարունակել է մեքենայի ընթացքը եւ բախվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության հաշվեկշռում գտնվող «Լադա-Նիվա» մակնիշի տրանսպորտային միջոցին, ապա՝ Ոստիկանության ծառայողի կողմից վարած «Օպել Աստրա», այնուհետեւ՝ գազալցակայանում կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներին, ինչից հետո «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայի երկու ուղեւորները ոստիկանության ծառայողների կողմից դուրս են բերվել, որի ընթացքում վարորդը կրկին փորձել է փախուստի դիմել, սակայն բախվել է գազալցակայանի պատին: Հիշյալ երեք անձինք ձերբակալվել են:

«ԳԱԶ-24» մակնիշի տրանսպորտային միջոցի խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել են 500գ Ափիոն եւ 455գ Հաշիշ տեսակի թմրամիջոցներ, նշանակվել են դատաապրանքագիտական, դատաքիմիական, նարկոլոգիական, քրեագիտական, տոկսիկոքիմիական փորձաքննություններ: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն ապահովելու, թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

ԿԱԴՐԱՅԻՆ ՋԱՐԴ

ՔՊ–ԱԿԱՆԻ ԸՆԿԵՐԸ՝ ՏՆՕՐԵՆԻ ԺՊ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ատգամավոր Դավիթ Դանիելյանը, խորհրդարանական աշխատանքից զատ, զբաղվում է, նաեւ «հարցեր լուծելով» է զբաղված:

Նա վերջերս, ի դեպ, հաճախ է հայտնվում լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Նախ՝ «Քաղաքացական պայմանագիր» կուսակցության Կապանի խորհուրդն էր ցանկանում ըստ իր ճաշակի, շրջապատի ձեւավորել ու նախագահել այն, ապա Կապանի բժշկական կենտրոնն իր վերահսկողության տակ առավ՝ հասնելով նրան, որ իր մտերիմը ԲԿ-ի տնօրենի պաշտոնակատար նշանակվեց: Ազդեցությունը տարածելու անսանձ ցանկության ունեցող նկարիչ պատգամավորը, պարզվում է, նկարչի վրձնահարվածով ու իշխանականի վարպետությամբ իրենով է արել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը: Ըստ ArmLur.am-ի ունեցած տեղեկությունների՝ հենց նրա անմիջական ջանքերով ՊՈԱԿ-ի պաշտոնակատար է նշանակվել իր բանակային ընկերը՝Արմեն Հովհաննիսյանը, ապա եղբորը՝ Հայկ Դանիելյանին է տեղավորել նույն ՊՈԱԿ -ում՝ որպես փոխտնօրեն: Այդքանը քիչ է՝ Հովհաննիսյանի ձեռամբ, բայց իր ակտիվ ներգործությամբ երկուստեք կադրային ջարդ են սկսել ընդդիմության հանրահավաքների մասնակցած աշխատակիցների նկատմամբ: Նախկին փոխտնօրենը, օրինակ, ում պաշտոն այժմ Դանիելյանի եղբայրն է զբաղեցնում, աշխատանքից ազատվել է ընդդիմության ցույցերի ժամանակ ծառայողական ավտոմեքենայով երեւալու ու ցույցին մասնակցելու համար: Նույն պատճառաբանությամբ աշխատանքից ազատվել են նաեւ ՊՈԱԿ-ի հաշվապահական բաժնի աշխատակիցները:

Պատգամավոր Դավիթ Դանիլեյանը, որ վերոնշյալ ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդականն է, ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ, խորհուրդներ տալու փոխարեն՝ կադրային ջարդ է իրականացրել նաեւ նույն ՊՈԱԿ-ի Սյունիքի մասնաճյուղում:

Ազատված պաշտոններում, խաղի կանոնների համաձայն, բանակային ընկերները սեփական շրջապատի մարդկանց են տեղավորում: Մեր աղբյուրը հատնեց, որ ոչ միայն ՔՊ-ական Դանիելյանն է այստեղ իր իր եղբորն աշխատանքի տեղավորել, այլ նաեւ Արմեն Հովհաննիսյանը. վերջինիս քույրն ու քրոջ ամուսինը նույնպես նույն ՊՈԱԿ-ի աշխատակիցներ են:

Օրենսդիր մարմնից աննկատ կերպով դեպի «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կուլիսներում հայտնված Դանիելյանին մեր հարցերը, բնականաբար, վրդովեցին, բայց նրան հորդորեցինք կառուցողականության դաշտ վերադառնալ ու պատասխանել, թե ինչպես է ստացվել, որ նախկին իշխանություններին «խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքով առաջնորդվելու մեջ մեղադրող «հեղափոխական» իշխանությունն այժմ նույն ձեռագրով է աշխատում:

«Եղբայրս նախքան ՊՈԱԿ-ի փոխտնօրեն նշանակվելը ճանապարհ է անցել, նոր հայտվել ադտեղ: Նա այդ նույն ՊՈԱԿ-ի անվտանգությունն ապահովող աշխատողներից է եղել, ապա հասել է մինչեւ մարզային ծառայության պետի տեղակալ, ապա՝ խորհրդական, եւ հետո նոր նշանակվել է ՊՈԱԿ-ի փոխտնօրեն: Ինչ վերաբերում է Արմեն Հովհաննիսյանին, ապա ես նրա փոխարեն չեմ կարող պատասխանել: Միայն կարող եմ նշել, որ, իմ տեղեկություններով, նրա քույրն ու փեսան ավելի վաղ (մոտ 9 տարի արդեն) են աշխատում այդ ՊՈԱԿ-ում, քան Հովհաննիսյանը»,- ArmLur.am-ի հետ զրույցում նշեց նա:

Մեր դիտարկմանը, թե, այնուամենայիվ, այս ամենն իշխանությունը սեփական հարմարավետությանը ծառայեցնելու պարզ օրինակ է, ու ՊՈԱԿ-ի աշխատակիցները, փաստորեն, ընդդիմադիր հայացքների համար են առանց աշխատանքի մնացել, Դանիելյանն ընդհանրական պատասխան տվեց. «Հայաստանում այսօր քաղաքական ենթատեքստից բխող ազատումներ չեն լինում. բոլորն էլ իրենց սեփական դիմումի համաձայն են հեռանում»:

Իր պատասխաններով, փաստորեն, Դանիելյանը հաստատեց, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն իրենով է արել, ինքն է որոշում՝ ով նշանակվի, ով ազատվի:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՀԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԵՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրերով դատավորներ են նշանակվել: Աշխեն Ղարսլյանը, Նարինե Ավագյանը նշանակվել են Հակակոռուպցիոն դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ: Սուրեն Խաչատրյանը, Տիգրան Դավթյանը, Արամ Գրիգորյանը, Մերի Մոսինյանը նշանակվել են Հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացմամբ դատավորներ: Աննա Դիլբարյանը նշանակվել է վարչական դատարանի դատավոր:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»

Ուկրաինան կմասնակցի «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթին, որն անցկացվելու է դեկտեմբերին Երեւանում: Եվրոպական հեռարձակողների միությունը եւ Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունն ավելի վաղ հայտնել էին, որ Մալենայի փայլուն հաղթանակից հետո «Մանկական Եվրատեսիլ» երգի 20-րդ մրցույթը դեկտեմբերի 11-ին տեղի կունենա Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: «Մանկական Եվրատեսիլ»-ը Երեւանը հյուրընկալում է երկրորդ անգամ:

ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Վերջին մեկ շաբաթում կորոնավիրուսով գրանցվել է վարակվելու 1434 նոր դեպք, վարակվածների ընդհանուր թիվը հասել է 426799-ի: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնից:

Փաստացի այս պահին բուժվում է 1666 պացիենտ, ավելացել է 522-ով:

Մեկ շաբաթում կորոնավիրուսի հետեւանքով մահացել է 2 մարդ. մահացածների թիվը 8635 է:

ԿԱՍԵՑՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառումներ են անցկացրել անհատ ձեռնարկատեր Մանի Մանոջին պատկանող (Արարատի մարզ, ք. Մասիս), իսկ Երեւանի կենտրոնի տեսուչները՝ «Վենդինգ» ՍՊԸ-ին պատկանող (Երեւան, Հանրապետության Հրապարակ 4) հանրային սննդի օբյեկտներում:

Մասիս քաղաքում գտնվող սննդի օբյեկտում չեն ապահովվել խաչաձեւ աղտոտումից պաշտպանության կանոնները, չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ կենդանիների մուտքը սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման եւ տեղափոխման տարածքներ կանխելու համար, չի եղել հանդերձարան աշխատակիցների համար, իսկ անձնակազմը չի ենթարկվել պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննությունների:

Երեւանում գործող կազմակերպությունում արտադրական, առեւտրի, օժանդակ, կենցաղային սենքերը չեն պահվել մաքուր եւ նորոգ վիճակում, չեն ունեցել խոնավ մաքրման եւ ախտահանման հնարավորություն, պատերը եւ առաստաղն ունեն վերանորոգման կարիք:

Հանրային սննդի նշված օբյեկտների գործունեությունը կասեցվել է, սահմանվել են խախտումները վերացնելու ժամկետներ:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԸ

ՀՀ քննչական կոմիտեի հատկադեպ կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում շարունակվում է քաղաքական ընդդիմության «Դիմադրություն» շարժման կողմից կազմակերպված հավաքի ընթացքում 2022թ. հունիսի 3-ին Երեւան քաղաքի Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ, շարժման ղեկավարների կազմակերպմամբ եւ ուղղորդմամբ, Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցի ուղղությամբ դեպի ՀՀ Ազգային ժողով անցնելու համար հավաքի մասնակիցները, Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում չենթարկվելով հասարակական կարգի պահպանությունն իրականացնող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, փորձել էին ճեղքել ոստիկանական շղթան, քարերով, մետաղյա ձողերով, մուրճով, շշերով, ինչպես նաեւ այլ առարկաներով հարվածներ հասցրել վերջիններիս. արդյունքում ոստիկանական շղթան ճեղքելու փորձերը հասարակական անվտանգությանն սպառնացող զանգվածային անկարգությունների վերածվելու եւ դրա հետեւանքով չորս տասնյակից ավել ոստիկանության աշխատակիցներին ծանրության տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ պատճառվելու դեպքի առթիվ նույն օրը հարուցվել էր համապատասխան քրեական գործը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացված մեծածավալ միջոցառումների արդյունքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 17 անձանց առաջադրվել են մեղադրանքներ՝ զանգվածային անկարգություններին մասնակցելու համար:

Քրեական վարույթով որպես մեղադրյալ ներգրավված անձանցից երեքի՝ Գ. Կարապետյանի, Ռ. Աբրահամյանի եւ Ա. Խաչատրյանի մասով նախաքննությունը 2022 թվականի հուլիսի 14-ին ավարտվել է եւ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան:

Իրականացված նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 2022 թվականի հունիսի 7-ին որոշում է կայացվել քաղաքացի Գ. Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով (որը համապատասխանում է 2022թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասին) որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ հանրորեն վտանգավոր արարք կատարելու՝ անհնազանդության եւ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ իրացնելու վերաբերյալ՝ երթը համակարգողների հրապարակային կոչերից հետո ոստիկանության աշխատակիցներին սադրելու եւ զանգվածային անկարգություններ հրահրելու միտումով, պատնեշ կազմած ոստիկանների սաղավարտներին ձեռքերով հարվածելու, ոստիկանության աշխատակիցների կանխարգելիչ գործողություններին բացահայտ հակադրվելու, վերջիններիս օրինական պահանջներին չենթարկվելով՝ իր ձեռքում գտնվող քարը եւ շիշը ոստիկանների ուղղությամբ նետելու համար:

Քննությունից թաքնվելու հիմքով մեղադրյալ Գ. Սարգսյանի նկատմամբ հայտարարվել էր հետախուզում, եւ նրա նկատմամբ խափանման միջոց ընտրվել կալանավորումը: 2022 թվականի հուլիսի 29-ին Գ. Սարգսյանը հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմին:

Մեղադրյալ Գ. Սարգսյանի նկատմամբ կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու համար միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Նախաքննությունը շարունակվում է:Ս

ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿԵԼ Է

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ա. Կուրեղյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ հարվածներ է հասցրել Կ. Աբրահամյանի դեմքի եւ գլխի շրջանում, այնուհետեւ երկու ձեռքով ձգել է վերջինիս պարանոցում եղած սեւ գույնի թելե վզնոցը, այդկերպ վերջինիս մոտ առաջացրել է մեխանիկական շնչահեղձություն, ով մեկ օր անց հիվանդանոցում մահացել է:

2021թ. օգոստոսի 10-ի լույս 11-ի գիշերը՝ կեսգիշերն անց՝ ժամը 02-ի սահմաններում, Ա. Կուրեղյանն այցելել է շուրջ վեց ամիս իր հետ մտերիմ եւ ինտիմ հարաբերությունների մեջ գտնվող Արմավիր քաղաքի բնակչուհի, 1962թ. ծնված Կ. Աբրահամյանի բնակարան, որտեղ 2000 դրամ գումարի դիմաց սեռական հարաբերություն է ունեցել վերջինիս հետ: Սակայն սեռական հարաբերության վերջին պահին կոպիտ ներհրում կատարելու արդյունքում ցավ է պատճառել Կ. Աբրահամյանին, ով ցավից մայր է հայհոյել իրեն: Այդ ժամանակ Ա. Կուրեղյանը զայրույթից, դիտավորությամբ, բռունցքների մի քանի հարվածներ է հասցրել նրա դեմքի շրջանում, այնուհետեւ երկու ձեռքով բռնել ու ձգել է Կ. Աբրահամյանի պարանոցին եղած սեւ գույնի թելե վզնոցը, որի վրա անցկացված է եղել նրա տան մուտքի դռան բանալին՝ այդկերպ շնչահեղձության հասցնելով նրան, եւ երբ ձգվելու արդյունքում թելը կտրվել է, այդ ժամանակ նոր միայն Ա. Կուրեղյանը թողել եւ հեռացել է նրա բնակարանից:

Հաջորդ օրը՝ 11.08.2021թ. ժամը 16:30-ի սահմաններում, հարեւանների օգնությամբ Կ. Աբրահամյանն անգիտակից վիճակում շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է «Արմավիր» ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունք եւ գիտակցության չգալով՝ 12.08.2021թ. ժամը 10:30-ին մահացել է: Դիահերձման նախնական ուսումնասիրության տվյալների համաձայն՝ վերջինիս մահվան պատճառը հանդիսացել է մեխանիկական շնչահեղձությունը:

Այսինքն, Ա. Կուրեղյանին մեղսագրվում է հանցավոր արարքի կատարում, որը նախատեսված է 18.04.2003թ ընդունված եւ 01.08.2003 ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 05.05.2021թ ընդունված եւ 01.07.2022թ ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասին): Գործը մտել է դատարան:

Ք.Մ.

ԼՈՒՐԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում պետական դավաճանության եւ լրտեսության դեպքերի առթիվ հարուցված քրեական վարույթների նկատմամբ հանրային լայն շրջանակների հետաքրքրությունը հաշվի առնելով՝ տեղեկացվում է, որ վարույթներից չորսով 2022 թվականի հուլիս ամսին կազմվել են եզրափակիչ դատավարական ակտեր, եւ կալանքի տակ գտնվող չորս անձանց մասով քրեական վարույթները մեղադրական եզրակացություններով հանձնվել են դատարան:

Հարուցված եւ դատարան հանձնված քրեական վարույթներով պարզվել է, որ գործակալական ցանցերում ներգրավված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծավալած հակապետական գործունեության արդյունքում օտարերկրյա հատուկ ծառայություններին հնարավորություն է տրվել հստակ տեղեկանալ հայկական զորքերի, զորամիավորումների, զինվորական տեխնիկայի տեսակի, թվաքանակի, նրանց հնարավոր մարտավարության՝ հարձակման, պաշտպանության, հանդիպակաց մարտի, մարտավարական վերադասավորումների եւ այլնի վերաբերյալ՝ ընդհուպ մինչեւ քարտեզի վրա տեղորոշված եղանակով ստանալով հայկական ուժերի աշխարհագրական հստակ կոորդինատները:

Օտարերկրյա հետախուզությունը լրտեսական ցանցում ներգրավել է հիմնականում նախկին կամ ներկա զինվորականների, որոնք ծառայության բերումով հնարավորություն են ունեցել մուտք գործել Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում գտնվող զորամասեր, բարձրանալ մարտական դիրքեր, ծանոթանալ ռազմական բնագավառին վերաբերող բազմապիսի փաստաթղթերի ու տեղեկությունների, քողարկված եղանակով կատարել տեսանկարահանումներ, ֆիքսել զինտեխնիկայի տեսակներն ու քանակները, զորամիավորումների շարժը, լուսանկարել ռազմական նշանակության քարտեզներ, ձեռք բերել այլ տեղեկություններ եւ այդպիսիք փոխանցել օտարերկրյա հետախուզության ներկայացուցիչներին՝ դրա դիմաց ստանալով իրենց վարձատրությունը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ միայն 2022 թվականի ընթացքում պետական դավաճանություն կատարելու դեպքերով հարուցված քրեական վարույթներով ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան են հանձնվել ընդհանուր թվով 5 քրեական վարույթներ 12 անձանց վերաբերյալ:

Հարուցված այլ վարույթներով նախաքննությունը շարունակվում է, եւ նկատի ունենալով դրանց նկատմամբ հանրային լայն շրջանակների հետաքրքրությունը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը պարբերաբար տեղեկություններ կտրամադրի դրանց ընթացքի եւ արդյունքների մասին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 27-28-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը բացահայտել է հանցագործության 57 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Բերդի սահմանագոտում՝ Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ավտոճանապարհի սկզբանամասում, ճանապարհը, դրա դիմաց գտնվող բարձունքներում տեղակայված, ամրացված հենակետերում գտնվող ադրբեջանական զինուժի գնդակոծություններից պաշտպանող գաբիոններով սարքված պատի մի մասը քանդվել է, սակայն արդեն մի քանի տարի նորոգման համար պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում: Հայաստան-Վրաստան միջպետական հիմնական ավոճանապարհի Ոսկեպար-Բաղանիս հատվածը, գտնվելով ադրբեջանական գնդակոծության գոտում, նախկինում պարբերաբար ենթարկվել է հակառակորդի գնդակոծությանը: 1990-ական թվականներին սահմանագոտով ձգվող, սահմանի ավելի խոցելի հատվածում քարից ու հողից թմբեր էին կառուցված, որոնք միջպետական ավտոճանապարհով անցնող ավտոմեքենաների երթեւեկը պաշտպանում էին ադրբեջանական գնդակոծություններից: Հետո այդ հողաթմբերը, չգիտես՝ ինչու, քանդվեցին, եւ տրանսպորտային միջոցները հակառակորդի գնդակոծության համար դարձան խոցելի: Ադրբեջանի Ղազախի շրջանում՝ Մազամ գյուղի տարածքում, երկար հենապատ է կառուցվել, որ գյուղ մտնող ավտոճանապարհը պաշտպանում է հայկական դիրքերից գնդակոծություններից: Կառուցվել է Ղազախ քաղաքից դեպի Ղուշչի-Այրում սահմանամերձ գյուղ տանող հողաշեն ռազմավարական նշանակության ավտոճանապարհ:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Երեւանում գործող, պլաստիկ շշերի, դրանց նախապատրաստվածքների արտադրությամբ զբաղվող «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ընդդեմ «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ի գումարի բռնագանձման պահանջով հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի 2022թ. հունվարի 10-ի որոշմամբ՝ դիմումն ընդունվել է դատարանի վարույթ, դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ մերժվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի միջնորդությունը: Հունիսի 22-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ն. Դալլաքյանը որոշում է ընդունել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին, որոնց մեջ որպես գործի լուծման համար նշանակության ունեցող փաստ է համարել այն, որ «Հիտեքս պլաստիկ» ՓԲԸ-ն «Դիլիջան ջուր» ՍՊԸ-ին մատարակարել է պրեֆորմաներ (նախակաղապարներ), որի վերաբերյալ հայցադիմումով ներկայացված պահանջը կազմում է 3 միլիոն 16 հազար 675 հազար դրամ, որից 2 միլիոն 865 հազար 81 դրամը՝որպես հիմնական պարտքի չվճարված մաս, 160 հազար 594 դրամը՝ որպես հաշվարկված տոկոսներ: Դիլիջանի հանքային ջրերի գործարանի արտադրանքը իրացվում է Հայաստանում, գործարանն ինչպե՞ս է հայտնվել ժամկետանց պարտքի տակ եւ դատական գործընթացում:

Ո. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

2022թ. հուլիսի 21-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում, դատավոր Զոյա Զաքինյանի նախագահությամբ, նշանակված է Գարիկ Հայակի Դադայանի դատավարության հերթական նիստը:

Ըստ «Դատալեքս» համակարգի՝ 1954թ. ծնված, միջնակարգ կրթությամբ, նախկինում դատված, պատժի կրումից վաղաժամկետ ազատված, Երեւանում բնակվող Գ. Դադայանը մեղադրվել է այն բանի համար, որ 2010թ. մարտ ամսվա սկզբներին գտնվելով ՌԴ Մոսկվա քաղաքում, Երեւան քաղաքում գտնվող ՀՀ քաղաքացիներ Հրանտ Օհանյանից եւ Սումբատ Տոնոյանից հեռախոսազանգով ստանալով առաջարկ՝Վրաստանում գերհարստացված «Ուրան» ռադիոակտիվ նյութ իրացնելու նպատակով այն հայթայթելու եւ իրենց տրամադրելու վերաբերյալ՝ գործարքից ակնկալվող շահույթը նյութի իրացումից հետո բաշխելու պայմանով հանցավոր համաձայնության է եկել վերջիններիս հետ հանցավոր մտահղացման իրագործմանը մասնակցելու եւ օժանդակելու հարցում եւ «Յունիստրիմ» բանկային փոխանցման համակարգով ստանալով իր կողմից որպես ճանապարհածախս պահանջված եւ Սումբատ Տոնոյանի անունից ուղարկված 1000 ԱՄՆ դոլար գումարը՝2010թ. մարտի 10-ին Մոսկվա-Երեւան չվերթով վերադարձել է Երեւան եւ նույն օրը Հրանտ Օհանյանին տրամադրել ապօրինի ձեռք բերված, ծխախոտի տուփի մեջ տեղադրված 17 գրամ կշռով գերհարստացված ուրան ռադիոակտիվ նյութ, որից հետո վերջինս Սումբատ Տոնոյանի հետ 2010թ. մարտի 11-ին ռադիոակտիվ նյութը ՀՀ մաքսային սահմանով մաքսանենգ ճանապարհով տեղափոխել են Վրաստանի Թբիլիսի քաղաք եւ նույն օրը փորձել իրացնել այն, սակայն հայտնաբերվել են Վրաստանի Հանրապետության իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Բացի այդ, երբ 2011թ. ապրիլի 22-ին Գարիկ Դադայանը բերման է ենթարկվել ՀՀ ԱԱԾ վարչական շենք, նրա մոտ հայտնաբերվել է օձի թույն:

2011թ. մայիսի 25-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Մարդանյանը վճռել է Գարիկ Դադայանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով եւ այդ հոդվածի սանկցիայով նրան դատապարտել ազատազրկման 6 տարի ժամկետով՝գույքի բռնագրավմամբ, նրան մեղավոր ճանաչել նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասով եւ այդ հոդվածի սանկցիայով նրան դատապարտել ազատազրկման 1 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով, պատիժները լրիվ գումարելու միջոցով Գարիկ Դադայանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝7 տարի ժամկետով՝գույքի բռնագրավմամբ:

Գ. Դադայանի պաշտպանները այդ դատավճռի դեմ վերաքննիչ, ապա վճռաբեկ բողոքներ են ներկայացրել: Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, վճռաբեկ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Գ. Դադայանի պաշտպաններ Կ. Սարդարյանի եւ Ա. Սարդարյանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձվել է: ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի 0710 հրահանգի թիվ 3 հավելվածի համաձայն՝ 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ Գ.Դադայանի նկատմամբ կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետը, նշանակված պատժաչափը կրճատվել է 6 ամիս ժամկետով եւ թողնվել է կրելու ազատազրկում՝6 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ նախագահի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի հրամանագրով Գ.Դադայանին շնորհվել է ներում, նշանակված պատժաչափը կրճատվել է 1 տարի ժամկետով եւ թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 տարի 6 ամիս ժամկետով:

2015 թվականի հոկտեմբերի 22-ին Գ.Դադայանն ազատ է արձակվել՝ամբողջությամբ կրելով նշանակված պատիժը: Գ.Դադայանի գանգատի հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Դադայանն ընդդեմ Հայաստանի գործով» 2018 թվականի սեպտեմբերի 6-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Դադայանի՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված իրավունքների խախտման փաստը ?րպես նոր հանգամանք, վկայակոչելով «Դադայանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը՝ Գ. Դադայանի պաշտպան Կ.Սարդարյանը 2019 թվականի մարտի 6-ին բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան:

2019թ. սեպտեմբերի 18-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, Գարիկ Դադայանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել, վերանայման արդյունքում Գարիկ Դադայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 233-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռը եւ այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽԱՌՆԱՇՓՈԹ՝ ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ

Գազալցակայաններում իսկական խառնաշփոթ է. այսօրվանից ուժի մեջ է մտել գազաբալոնների վկայագրման նոր կարգավորումը, համաձայն որի՝ տրանսպորտային միջոցը վկայագրված չլինելու դեպքում չի կարող լիցքավորվել: Գազալցակայաններում չեն սպասարկում այն վարորդներին, որոնք չունեն գազաբալոնի վկայագիր: Մերժված վարորդները ստիպված են լինում իրենց ավտոմեքենան լցավորել բենզինով, որի մեկ լիտրը սկսում է 520 դրամից:

Տեղեկացնենք, որ գործում է համապատասխան թվային համակարգ, որով գազաբալոնների վկայագրումը ստուգելու հնարավորություն ունեն գազալցակայանների աշխատակիցները: Սակայն ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ գազալցակայանների մեծ մասը միացված չէր թվային այդ համակարգին: Ըստ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության՝ գազաբալոնների տվյալների շտեմարանն ամբողջությամբ պատրաստ է, իսկ գազալցակայաններն էլ միացված են համակարգին: Ավելին, այս գերատեսչությունից վարորդներին խորհուրդ են տվել գազալցակայաններ մոտենալիս սկզբնական փուլում, ամեն դեպքում, ձեռքի տակ ունենալ թղթային տարբերակը:

«Էքսպերտ Թեչ» գազաբալոնների փորձարկման, վկայագրման եւ տեղադրման լիցենզավորված ընկերության տնօրեն Մկրտիչ Տիգրանյանի խոսքով՝ երեկ վարորդներից մեկին գազալցակայանում հրաժարվել են սպասարկել նույնիսկ գազաբալոնի վկայագրման առկայության դեպքում. «Գազալցակայաններում բացարձակ լցավորում չեն անում. օրինակ՝ հենց նոր զանգեցին Ավանի գազալցակայանից, ասում են՝ փաստաթղթով գնացել եմ էնտեղ, չեն լցավորում, ասում է՝ չարեցին, թողեցի դուրս եկա: Խնդիրը գազալցկայանների հետ է. համակարգիչ չեն դրել. համապատասխան ծրագիր չեն մտել»:

Նշենք, որ վարորդների զգալի հատվածը գազաբալոնների վկայագրումը թողել է վերջին օրվան, ու հիմա վկայագրման կայաններում բավական մեծ ծավալի հերթեր են: Ի դեպ, օրեր առաջ ArmLur.am-ը գրել էր, որ գազաբալոնների վկայագրման ճնշակայաններն օրերս շահագործվելիք էլեկտրոնային հարթակում կգրանցեն մեքենայի տվյալները, դրանք տեսանելի կլինեն նաեւ գազալցակայանների համար, ինչն էլ գազ լիցքավորողների համար հիմք կլինի սպասարկելու դեռեւս վկայագիր չունեցող, բայց հերթագրված ավտոմեքենան:

«300 հոգի մարդ առավոտից եկել, հերթագրվել են, խառը վիճակ է, պետական կառույցներից հայտարարել են, ու վարորդները ընկել են աժիոտաժի մեջ: Մարդկանց հնարավորություն են տալիս, որ գազով լցավորեն իրենց ավտոմեքենաները, մինչեւ իրենց հերթը հասնի»,- ասաց Մ. Տիգրանյանը:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 49 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 74-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹԻՄԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Հայտնի են Entrepreneurship World Cup 2022 ազգային փուլի կիսաեզրափակիչ անցած թիմերը:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Ձեռներեցության եւ նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը (EPIC) հայտարարել է մրցույթի կիսաեզրափակիչ փուլ անցած մասնակից թիմերին:

Ավելի քան 110 թիմերից 99-ը հաղթահարել են նախնական փուլը, իսկ 34-ն անցել են կիսաեզրափակիչ փուլ: Ընտրությունն իրականացվել է 48 մասնագետների կողմից, որոնք յուրաքանչյուր հայտ ուսումնասիրել եւ գնահատել են՝ ըստ EWC-ի միջազգային գնահատման ստանդարտների:

EWC մրցույթի ազգային կիսաեզրափակիչը կանցկացվի օգոստոսի 1-ին եւ 2-ին: Կանխատեսվում է, որ մոտ տասներկու ստարտափ թիմեր կանցնեն ազգային եզրափակիչ փուլ:

Օգոստոսի 4-ից 12-ը եզրափակիչ փուլ անցած թիմերը կմասնակցեն որակավորված մասնագետների եւ բիզնես խորհրդատուների հետ անցկացվող մեկ շաբաթյա հիբրիդային դասընթաց-հանդիպումների, որի ընթացքում մասնագետները կօգնեն թիմերին պատրաստվել ազգային եզրափակչին:

Ազգային եզրափակիչը տեղի կունենա օգոստոսի 13-ին Ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում: Սա կարող է համարվել ձեռներեցության մշակույթի տոն, որը հագեցած կլինի ոգեշնչող ելույթներով հետաքրքիր պանելային քննարկումով եւ ազգային եզրափակչի մրցույթով, որին ներկա կլինեն հատուկ հյուրեր, ստարտափ էկոհամակարգի ներկայացուցիչներ եւ ձեռնարկատերեր: Միջոցառմանը կհաջորդի հետընտրական երեկույթ՝ նշելու հաղթողների ձեռքբերումները եւ լիցքաթափվելու մի քանի ամսվա տքնաջան աշխատանքից հետո:

Նշենք, որ EWC միջազգային մրցույթում Հայաստանն այս տարի մեկի փոխարեն ունենալու է երկու ներկայացուցիչ, ինչը փաստում է հայաստանյան ստարտափ համակարգի դրական աճի մասին:

EWC-ի ազգային եզրափակչին մասնակցելու համար գրանցման վերջնաժամկետն օգոստոսի 10-ն է:

Հայաստանում ձեռներեցության աշխարհի գավաթի գլխավոր կազմակերպիչը EPIC-ն է, որը համագործակցում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, GIZ Հայաստանի, Startup Armenia հիմնադրամի, Նորարարության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի (NCIE), TEAM Telecom Armenia-ի եւ «Թումո» լաբերի հետ:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է անհատ ձեռնարկատեր Մանե Գրիգորյանին պատկանող կաթնամթերքի արտադրամասի «Չանախ» պանիր արտադրատեսակի արտադրական գործունեությունը (Սյունիքի մարզ, գյուղ Խնձորեսկ): որոշման հիմքը վտանգավոր սննդամթերքի թողարկումն է: Լաբորատոր փորձաքննության են հանձնել ընկերության «Չանախ» տեսակի պանրի նմուշը: Արդյունքում պարզվել է, որ այն չի համապատասխանում սննդամթերքի անվտանգության ոլորտի իրավական ակտերով սահմանված անվտանգության եւ սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջներին: Խախտման վերացման համար տեսչական մարմինը սահմանել է ժամկետ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Գ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ
Վարկային կազմակերպության անվանումը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ ՈՒՎԿ ՓԲԸ»

Ամսաթիվը 01/04/22 -ից 30/06/22

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մնացորդը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մնացորդը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	7,000,000	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	11,021,198	1,000,000	Խախտում առկա չէ
Ն1 ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	21.0%	12.0%	Խախտում առկա չէ
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	7.7%	25.0%	Խախտում առկա չէ
Ն51 նորմատիվի պահանջների չբավարարող անշարժ գույքով ապահովված ՀՀ դրամով վարկերի թույլատրելի առավելագույն չափը	0.0%	10.0%	Խախտում առկա չէ
Ն52 նորմատիվի պահանջներին չբավարարող, անշարժ գույքով ապահովված արտարժութային վարկերի թույլատրելի առավելագույն չափը	0.0%	5.0%	Խախտում առկա չէ

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Դ. Ազատյան

Գլխավոր հաշվապահ Ա. Ավետյան

2

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական դիրքի մասին
«30» Հունիսի 2022թ.

(հազար դրամ)	30/06/22 (Չաստուգված)	31/12/21 (Ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,278,559	2,412,544
Ներդրումային արժեթղթեր		
_Կազմակերպության կողմից պահվող	4,156,569	5,116,897
_Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	516,626	-
Հաճախորդներին տրված վարկեր	57,789,020	52,318,930
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	1,992,671	1,718,715
Այլ ակտիվներ	863,617	520,455
Ընդամենը ակտիվներ	69,597,064	62,087,541
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,421,667	8,776,965
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	490,368	-
Այլ փոխառություններ	23,838,323	26,156,702
Թողարկված արժեթղթեր	350,584	413,487
Վարձակալության գծով պարտավորություններ	1,441,592	1,344,542
Ընթացիկ հարկային պարտավորություններ	250,352	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	2,848,586	2,678,897
Այլ պարտավորություններ	723,871	538,205
Ընդամենը պարտավորություններ	44,365,343	39,908,798
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	7,000,000	7,000,000
Գլխավոր պահուստ	515,755	515,755
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	(683,392)	(351,536)
Չբաշխված շահույթ	18,399,356	15,014,524
Ընդամենը սեփական կապիտալ	25,231,720	22,178,743
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	69,597,064	62,087,541

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Դ. Ազատյան

Գլխավոր հաշվապահ Ա. Ավետյան

Հաշվետվությունները վավերացվել են 29/07/2022թ.

3

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
«30» Հունիսի 2022թ.

(հազար դրամ)	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Նախորդ ֆինանսական տարվա համարժեք միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ամռնական)					
Մնացորդը առ 01 հունվարի 2021թ. (Ստուգված)	7,000,000	378,755	(80,617)	7,389,516	14,687,654
Ժամանակաշրջանի զուտ շահույթ				1,348,087	1,348,087
Շահութաբաժիններ					-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում					-
Հաստկացում գլխավոր պահուստին					-
Այլ համապարփակ եկամուտ			(111,993)		(111,993)
Մնացորդը առ 30 Հունիսի 2021թ. (Չաստուգված)	7,000,000	378,755	(192,610)	8,737,603	15,923,748
	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Ընթացիկ տարվա համարժեք միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ամռնական)					

1

ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ, ՀՀ, ԵՐԵՎԱՆ, Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ 32/6
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական արդյունքների մասին
«30» Հունիսի 2022թ.

(հազար դրամ)	01/04/2022-30/06/2022 (Չաստուգված)	01/01/2022-30/06/2022 (Չաստուգված)	01/04/2021-30/06/2021 (Չաստուգված)	01/01/2021-30/06/2021 (Չաստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4,108,888	7,249,273	3,384,488	6,679,727
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(869,845)	(1,594,563)	(701,534)	(1,431,820)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	3,239,042	5,654,710	2,682,954	5,247,908
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8,951	12,311	262	1,990
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(8,417)	(13,898)	(1,491)	(4,203)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	535	(1,587)	(1,230)	(2,212)
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	1,601,669	1,529,983	436,809	546,359
Այլ գործառնական եկամուտ	11,740	20,349	16,257	24,161
Արժեզրկումից կորուստներ	(1,920,224)	(1,148,245)	(821,861)	(2,683,173)
Աշխատակազմի գծով ծախսեր	(935,193)	(1,728,785)	(573,879)	(1,163,299)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(282,926)	(478,559)	(192,295)	(365,523)
Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը	1,714,644	3,847,866	1,546,756	1,604,220
Շահութահարկի գծով ծախս (լիմիտացում)	(34,645)	(463,033)	(245,665)	(256,133)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	1,679,999	3,384,832	1,301,091	1,348,087
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Ներդրումային արժեթղթերի վերագնահատումներ	(98,349)	(331,856)	(60,301)	(111,993)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք առանց հարկերի	(98,349)	(331,856)	(60,301)	(111,993)
Համապարփակ ֆինանսական արդյունք	1,581,650	3,052,977	1,240,790	1,236,094

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Դ. Ազատյան

Գլխավոր հաշվապահ Ա. Ավետյան

3

Մնացորդը առ 01 հունվարի 2022թ. (Ստուգված)	7,000,000	515,755	(351,536)	15,014,524	22,178,743
Ժամանակաշրջանի զուտ շահույթ				3,384,832	3,384,832
Շահութաբաժիններ					-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում					-
Հատկացում գլխավոր պահուստին	-		-	-	-
Այլ համապարփակ եկամուտ			(331,856)		(331,856)
Մնացորդը առ 30 Հունիսի 2022 (Չաստուգված)	7,000,000	515,755	(683,392)	18,399,356	25,231,720

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Դ. Ազատյան

Գլխավոր հաշվապահ Ա. Ավետյան

4

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
«30» Հունիսի 2022թ.

(հազար դրամ)	Ծանոթ.	01/01/2022-30/06/2022 (Չաստուգված)	01/01/2021-30/06/2021 (Չաստուգված)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		2,624,767	4,162,381
Ստացված տոկոսներ		5,186,890	5,058,923
Վճարված տոկոսներ		(2,241,274)	(1,014,820)
Վճարված կոմիսիոն գումարներ		(13,201)	(4,203)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		674,636	194,188
Ստացված կոմիսիոնն գումարներ		1,110,303	1,567,134
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(1,181,545)	(1,054,875)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(911,043)	(583,967)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(6,804,747)	(3,383,295)
Տեղաբաշխված վարկերի նվազում/(ավելացում)		(6,804,747)	(3,383,295)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(4,179,980)	779,087
Վճարված շահութահարկ		-	(162,869)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(4,179,980)	616,217
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(723,889)	(54,100)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		2,798	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-	-
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(721,091)	(54,100)
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ			
Ներգրավված վարկերի ավելացում/(նվազում)		6,621,043	1,146,084
Բաժնետերերի ներդրումներ կանոնադրական կապիտալում		-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		489,896	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		7,110,939	1,146,084
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(342,973)	(75,082)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		1,866,895	1,633,120
Ակնկալվող պարբերական կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(880)	(627)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		2,412,544	1,608,503
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		4,278,559	3,240,996

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն Դ. Ազատյան

Գլխավոր հաշվապահ Ա. Ավետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ հրապարակվում է Ռուբեն Վլադիմիրի Վարդանյանի պարտատերերի պահանջների նախնական ցուցակը:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի պահանջի չափը՝ 8.699.178,20 ՀՀ դրամ /հերթը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետ /չապահովված//,

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պահանջի չափը-54.398,60 ՀՀ դրամ /հերթը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի /ապահովված//:

Սույն պահանջների կամ դրանց առաջնահերթության վերաբերյալ գրավոր առարկությունները յոթ օրվա ընթացքում պետք է ներկայացվեն ՀՀ սնանկության դատարան՝ք. Երեւան, Օտյան 53/2 հասցեով:

Կառավարիչի մոտ դեպոնացված սույն պահանջին ծանաթանալու համար կողմերը կարող են դիմել կառավարիչ Վ. Ասատրյանին: Հեռ.՝+37494187008:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

ՀՀ Սնանկության դատարանի՝ 21.07.2021թ. թիվ ՍՆԴ/1559/04/21 վճռով սնանկ ճանաչված Գագիկ Իշխանի Ջիլֆուղարյանի (ք. Գորիս, Սյունիքի փողոց, տ. 123, ն/ք՝ 002155042, ծնված՝ 14.04.1951թ.) պարտատերերի առաջին ժողովը նշանակվել է 29.08.2022թ. ժամը 15:00-ին ՀՀ սնանկության դատարանում (ՀՀ, ք. Երեւան, Օտյան 53/2):

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ, ՀԱՎԵՐԺ...»

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

Կայացել է ՀՀ ժողովրդական արտիստ, մեծանուն կոմպոզիտոր Արթուր Գրիգորյանի հիշատակին նվիրված համերգը՝ հայ արտիստների մասնակցությամբ: Մեծ կոմպոզիտորին նվիրված համերգը համախմբել էր Երգի պետական թատրոնի ներկա եւ հին սերունդին թանկ եւ ջերմ հուշերի ներքո, եւ պատահական չէր, որ համերգը կրում էր «Երեկ, այսօր, հավերժ...» խորագիրը:



Համերգը կազմակերպել են դուստրը՝ Հայաստանի երգի պետական թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մանե Գրիգորյանը, ռեժիսոր Արթուր Մանուկյանը, Տիգրան Վիրաբյանը, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբը, որոնք բոլորին համախմբեցին եւ կյանքի կոչեցին Գրիգորիչին նվիրված հուշ-երեկոն:

Երգի պետական թատրոնի առաջին փայլուն սերունդի ներկայացուցիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Ալլա Ալեւոնյանը ArmLur.am-ի հետ զրույցում կիսվել է իր տպավորությունների մասին եւ ասել, որ ողջ համերգի ընթացքում զգացել է Արթուր Գրիգորիչը ներկայությունը:

«Մեր մեջ մեծ ցավ կա, որ Գրիգորիչը ֆիզիկապես ներկա չէ, բայց նաեւ հասկանում ենք, որ իր ներկայությունը կա, եւ դա տարիներ ի վեր մեզ հետ տանելու ենք, որովհետեւ այն երգերը, որ նա է գրել, այն աշխատանքը, որ արվել է, անգնահատելի է: Նա այն տեսակն էր, որ իրենից հետո ապրեցնում է իր թողած գործը: Հիշում եմ, երբ պատրաստվում էինք ինչ-որ մի երկրում համերգի, սկսած ծրագրից, երգերի հերթականությունից, լույսից, ձայնից, բեմական պահվածքից, ամեն բան քննարկում էինք նրա հետ, եւ դա մնացել է մեզ, եւ սովորել ենք իր հետ շփման արդյունքում: Կոնկրետ իմ դեպքում նա շատ չէր միջամտում, ասում էր՝ դու ոնց զգում ես, այնպես էլ արա, քո մոտ շատ բնական է ստացվում»,- հուզված նշում է երգչուհին:

Ալլա Լեւոնյանի խոսքով՝ Արթուր Գրիգորիչը շարունակում է ապրել իրենց հուշերում եւ մտքերում. «Հիմա մենք ինչ-որ անում ենք, նա ներկա է, ուր էլ գնում ենք համերգի, ներկա է: Ես զգում եմ նրա ներկայությունը, ինչ թեմայի շուրջ որ խոսում ենք, անպայման իրեն մեջ ենք բերում. դա նշանակում է, որ նա ներկա է, մեզ հետ է: Համերգին բոլորս շատ հուզված էինք, բայց նաեւ ուրախ, ժպիտով հիշողությունների գիրկն էինք ընկել: Չեմ կարող նկարագրել, թե զգացողությունների ինչ տեղատարափ էր մեզ մոտ: Ընկերներիս ասում էի՝ վերջին մի քանի տարում առիթ չէր եղել, որ բոլորս հավաքվեինք նույն բեմում: Նա միշտ ասում էր՝ դուք պետք է լինեք համախմբված, եւ այդպես էլ եղավ. նա այնպես արեց, որ մենք կրկին միասին լինենք, Երգի թատրոնի բոլոր սերունդներով»:

Ալլա Լեւոնյանի կարծիքով՝ Արթուր Գրիգորիչը վառ անհատականություն էր, ում թողած ժառանգությունը դեռ շատ երկար տարիներ կկրթի մեր ապագա երաժշտասերներին:

«Նա շատ մեծ ներդրում ունի հայկական երգավեստի էստրադային ժանրի ձեւավորման գործում: Միայն նրա շնորհիվ է, որ այսօր շատ երգիչ, երգչուհիներ երգարվեստում իրենց ուրույն տեղն ունեն: Նա իսկապես ճաշակ էր թելադրում»,-հավելեց մեր զրուցակիցը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝2022թ. օգոստոսի 15-ին՝ժամը 12.00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի համայնքապետարանում տեղի կունենան հանրային լսումներ Արագածոտնի մարզի Մաստարայի պեռլիտի հանքավայրի «Ա ՊԵՌԼԻՏ» ՍՊ ընկերության կողմից արդյունահանման աշխատանքների նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ լսումներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (5)

Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ հրապարակվում է «ԱԼԵՆ ՅԱՆԱ» ՍՊԸ -ի (ՀՎՀՀ՝ 00479844) պարտատերերի պահանջների նախնական ցուցակը.

● ՀՀ պետական եկամուտների կոմիտե - պահանջի չափը՝3.284.603 /երեք միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր երեք ՀՀ դրամ / հերթը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետ /չապահովված//,

● ՀՀ պետական եկամուտների կոմիտե - պահանջի չափը՝ 1.000.000 /մեկ միլիոն ՀՀ դրամ / հերթը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ /չապահովված//:

Սույն պահանջների կամ դրանց առաջնահերթության վերաբերյալ գրավոր առարկությունները յոթ օրվա ընթացքում պետք է ներկայացվեն ՀՀ սնանկության դատարան՝ ք. Երեւան, Օտյան 53/2 հասցեով:

Պահանջին ծանաթանալու համար կողմերը կարող են դիմել կառավարչին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (6)

Գայանե Անաստասի Սարգսյանի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. օգոստոսի 17-ին, ժամը 11:30-ին Գայանե Անաստասի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Արմենակ Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Գայանե Սարգսյանի պարտավորություններ համար <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ում գրավադրված սեփականության իրավունքով Անաստաս Սարգսյանին պատկանող `

Լոտ-1. ՀՀ քաղաք Երեւան Մալաթիա Ս.Օհանովի փողոց 12 շենք 26 հասցեում գտվող անշարժ գույքի աճուրդային վաճառքը:

Անշարժ գույքը գտնվում է 9 հարկանի շենքի 9-րդ հարկում, բնակարանի մակերես 55.6 քմ է, առաստաղի բարձրությունը 2.8 մետր, պատուհանները մետաղապլաստ են, հատակը մանրատախտակ, ունի ջրամատակարարում, Գազամատակակարում, Էլեկտրամատակարարում:

Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է 20 790 000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը կազմում է 200 000 ՀՀ դրամ

Նախավճարը կազմում է տվյալ լոտի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են Գայանե Սարգսյանի սնանկության հատուկ հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472302882650130 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտը ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ Արմենակ Էլոյանին /հեռ.094 411 487/:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(7)

«Երիտասարդները՝հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 00174589) կորցրել է կնիքը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(8)

«Քեյր բիլդինգ սերվիզիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝Ձեռնարկող) նախատեսում է Արագածոտնի մարզի Արագածավան խոշորացված համայնքի տարածքում Մաստարայի պեռլիտի հանքավայրի շահագործման աշխատանքներ (այսուհետ՝Նախատեսվող գործունեություն): Նախատեսող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն չի ակնկալվում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով եւ ՀՀ կառավարության «Հանրային ծանուցման եւ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ. օգոստոսի 12-ին՝ժամը 12:00-ին, Արագածոտնի մարզի Արագածավան խոշորացված համայնքի վարչական շենքում տեղի կունենա նախատեսվող գործունեության փորձաքննության նախնական փուլի երկրորդ հանրային քննարկումը: Հանրային քննարկումն իրականացնում են ՇՄ նախարարությունը, Ձեռնարկողը եւ Արագածավան խոշորացված համայնքի ղեկավարը:

Հանրությունը կարող է գրավոր դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնել 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթղթերին կարող եք ծանոթանալ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում՝ www.env.am, ք. Երեւան, Բուզանդի 1/3 հասցեում, հեռ.՝ 011/22-02-17: Ձեռնարկողի հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, Շիրազի փողոց 43, հեռ.՝099991155:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (9)

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. օգոստոսի 23-ին, ժամը 15:00-ին Յուրի Սելիպանովի սնանկության գործով կառավարիչ Վ.Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Յուրի Սելիպանովի սեփականություն իրավունքով պատկանող հետեւյալ գույքի աճուրդային վաճառք՝ բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ- 1. ՀՀ ք. Երեւան, Կենտրոն համայնք, Չարենցի փող. 27ա շենքի բակում գտնվող ավտոտնակը/36.9 քմ./ :

Մեկնարկային գինը սահմանվում է 5 718 324 ՀՀ դրամ,

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1% չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Յուրի Սելիպանովի սնանկության հատուկ հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472304369220000 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝Վ. Էլոյանին / 041 44 58 57 /:

● Օգոստոսի 11-ին Բոհեմ թատրոնում տեղի կունենա Ռաֆայել Երանոսյանի «Էվոլյուցիա» ստենդափը: Տոմսերի արժեքը՝3000, 4000, 5000, 6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե ով կարող է աշխատել որպես ուսուցիչ:

Սերինե Ավդալյան (24 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) ուսուցչի որակավորման տարակարգը քառաստիճան է եւ շնորհվում է աստիճանակարգության սկզբունքով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ պատասխանել, թե անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ով պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Լուսինե Սարգսյան (51 տարեկան)

ՊԱՏԱԽՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում հաշվառված լինելու ժամանակահատվածում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Վայոց ձորում

Երեկ խոշոր ավտովթար է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Արարատի մարզի բնակիչ 37-ամյա Ալիկ Մկրտչյանը իր վարած Mercedes մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 118 կմ հատվածում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ կողաշրջված վիճակում հայտնվել ջրահեռացման առվի մեջ:

Վթարի հետեւանքով Ա. Մկրտչյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Եղեգնաձորի ԲԿ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: